

**Արձանագրություն № 5 (305)**  
**ԵՊՀ-ի ռուս բանասիրության ֆակուլտետի գիտական խորհրդի**  
**2018 թ-ի մարտի 23-ի նիստի**

Գիտխորհրդի նիստը նախագահում էր ֆակուլտետի ղեկան դոցենտ Պ.Բալայանը:  
Ֆակուլտետի գիտխորհրդի նիստին ներկա են 27 անդամներից 20-ը: Ապահովված է անհրաժեշտ քվորումը:

**Օրակարգ.**

1. Ռուսաց լեզվի /հումանիտար ֆակ-ի/ ամբիոնի հաշվետվությունը:
2. Մոսկվայի կառավարության կրթաթոշակների հարցը:
3. Հրատարակման երաշխավորելու մասին:
4. Հայցորդի, գիտական ղեկավարի և գիտական թեմայի հաստատման մասին:

**1. ԼՍԵՑԻՆ՝ ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Ս. Լալայանի հաշվետվությունը:**

Ռուսաց լեզվի ամբիոնի /հումանիտար ֆակուլտետների/ վարիչ դոցենտ Ս. Ա. Լալայանը հաշվետվություն ներկայացրեց 2016-2017 ուս. տարվա ամբիոնի գործունեության վերաբերյալ:

Հաշվետու տարվա ընթացքում ամբիոնում պաշտպանվել է 1 դոկտորական ատենախոսություն, դասախոսների կողմից հրատարակվել է 14 գիտական աշխատանք: Ամբիոնի բազային դասագիրքը հանձնվել է տպարան: Փոփոխության է ենթարկվել գիտելիքների ստուգման ձևը – ներդրվել է ստուգում ըստ դասերի:

Ամբիոնի դասախոսներ Լ.Ս. Հարությունյանի, Թ.Ա. Առուշանովայի, Ա.Վ. Գասպարյանի “**Ռուսաց լեզվի ձեռնարկ (ընթերցանության գիրք)**” ձեռնարկը անցել է հրատարակչային խորհրդի նիստը:

Ամբիոնի 14 դասախոսներից 13-ը հանձնել են C1 մակարդակի քննությունը:

Մշակվել է մագիստրատուրայում ռուսաց լեզվի ծրագիր:

Ռուսաց լեզվի /բնագիտական ֆակ-ի/ ամբիոնի հետ համատեղ անցկացվել է ուսանողական օլիմպիադա:

Նշվեց նաև, որ ուսումնական ձեռնարկներ չունեն 2 բաժիններ, շուտով տպագրության կհանձնվի հոգեբանների համար ձեռնարկը:

Դեկան Բալայանը հարց հնչեցրեց, քանի ուսանող կարող են հանձնել B1 մակարդակի քննություն և խնդրեց թեստավորում անցկացնել և արդյունքները ներկայացնել:

**ՈՐՈՇԵՑԻՆ**՝ Հաշվետվությունն ընդունել ի գիտություն:

2. ԼՍԵՑԻՆ՝ 2017-2018 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի համար անվանական կրթաթոշակների թեկնածուների երաշխավորության հարցը:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Դեկան Պ. Բալայանը:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ Հաշվի առնելով ուսումնառության ընթացքում ցուցաբերած գերազանց առաջադիմությունը՝ որպես Մոսկվայի կառավարության կրթաթոշակի թեկնածուներ՝ հաստատել հետևյալ անձանց.

Իսավերդյան Զարուհի (3-րդ կուրս)

Սկրտյան Միլենա (3-րդ կուրս):

3. ԼՍԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի /հումանիտար ֆակուլտետների համար/ ամբիոնի դոցենտ Բ.Գ.Պ. *Անուշ Վահանի Հակոբյանի* “Կարդում և խոսում ենք Ֆրանսիայի մասին ռուսերեն” - “*Читаем и говорим о Франции по-русски* ” ուսումնական ձեռնարկի հրատարակման մասին:

ԱՐՏԱՀԱՅՏՎԵՑԻՆ՝ Մեթոդական խորհրդի նախագահ՝ Բ.Գ.Պ., պրոֆեսոր Վ.Ն.Հարությունյանը, Բ.Գ.Թ., դոցենտ Դ.Յ.Գազարովան:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ ռուսաց լեզվի /հումանիտար ֆակուլտետների համար/ ամբիոնի դոցենտ Բ.Գ.Պ. Անուշ Վահանի Հակոբյանի “Կարդում և խոսում ենք Ֆրանսիայի մասին ռուսերեն” - “*Читаем и говорим о Франции по-русски* ” ուսումնական ձեռնարկը երաշխավորել հրատարակման համար:

4. ԼՍԵՑԻՆ՝ *Էդգար Սուրենի Արշակյանին* ԵՊՀ ռուս բանասիրության ֆակուլտետի ռուս գրականության ամբիոնի հայցորդ ձևակերպելու, թեկնածուական ատենախոսության թեմայի հաստատման և գիտական ղեկավար նշանակելու մասին:

ՈՐՈՇԵՑԻՆ՝ 1. *Էդգար Սուրենի Արշակյանին* ռուս գրականության ամբիոնի հայցորդ ձևակերպել և հաստատել թեկնածուական ատենախոսության հետևյալ թեման՝ “Проблемы мифотворчества в поэзии А. Блока и А. Белого” - “Դիցաստեղծման հիմնախնդիրները Ա.Բլոկի և Ա.Բելու պոեզիայում”, որը համապատասխանում է Ժ.01.03 «Ռուս գրականություն» մասնագիտության:

2. Թեկնածուական ատենախոսության գիտական ղեկավար նշանակել ռուս գրականության ամբիոնի վարիչ, Բ.Գ.Թ., դոցենտ Լևոն Գեորգիի Հակոբյանին:

Գիտական խորհրդի նախագահ՝

Պ.Բ. ԲԱԼԱՅԱՆ

Գիտական խորհրդի քարտուղար՝

Մ.Ռ. ԴՊԻՐՅԱՆ